ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-39-1

ք. Երևան «___» _____ 2026 թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Տ. Ենոքյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԷՎԱՆ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Հ. Գևորգյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ։ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը։

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3)։ Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն

այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **40 000 000 (քառասուն միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը

չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող

օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	«ԷՎԱՆ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի փ. 17-24
ՀՀ Ֆինանսների նախարարության	Բանկ՝ «ԱմերիաԲանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	
Հ/Հ 900011042471	Հ/հ՝ 1570073926220100
ՀՎՀՀ 02882913	ՀՎՀՀ՝ 02843803
Հեռ. 010 59-67-89	հեռ. 044 804 802
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	Էլ. Փոստ: info@e-evan.com
_____ Տ. Ենոքյան	_____ Հ. Գևորգյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ.Տ)
Կ.Տ	

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Digitally signed by GEVORGYAN HAKOB 1704850414
Date: 2026.05.20 11:43:04 AMT

Հավելված N 1
«____» _____ 2026թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-39-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	Էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայություններ **CPV 63711270/13**	EVAN էլեկտրական մեքենաների լիցքավորման սարքերի (EVSE) տեխնիկական նկարագիր **Ընդհանուր տեղեկություններ:** •Պրոդուկտի անվանումը՝ EVAN •Լիցքավորման ծառայության արժեք 1 կՎտ/ժ-ի համար – 120 ՀՀ դրամ՝ նեռարյալ ԱԱՀ •Լիցքավորման սարքի նկարագրությունը՝ էլեկտրական մեքենաների արագ լիցքավորման ծառայություն, որն իրականացնում է DC տիպի հոսանքի փոխանցում՝ CCS2 ,GB/T կոնեկտորի միջոցով: **Տեխնիկական բնութագրեր:** •ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի Պարեկային ծառայության 82 միավոր <<VOLVO EX40>>, 6 միավոր <<Chevrolet Menlo>> և 57 միավոր <<Geely Galaxy E8>> մակնիշի տրանսպորտային միջոցների համար անհրաժեշտ միակցիչի տեսակը՝ CCS2 և GB/T կոնեկտորների միջոցով: •Լիցքավորման հոսանքի տեսակը՝ DC (գերարագ լիցքավորում; fast charge) •Երևան քաղաքում գտնվող կայանների Առավելագույն հզորությունը՝ կախված տեղակայման վայրից՝	դրամ	40 000 000	1	ք. Երևան Ծ. Իսակովի 7	Պայմանագիրը ուժի մտնելուց հետո 1 տարի ժամկետով

		1. Երևան Մոլ – 200 կՎտ (GB/T DC,CCS2) 2. Մուլտի Վելնես – 160 կՎտ(GB/T DC,CCS2) 3. Երևան Սիթի կոմիտաս – 120 կՎտ (GB/T DC,CCS2) 4. Հայ-բելսառուսական առևտրի տուն - 120 կՎտ (GB/T DC,CCS2) 5. Էրեբունի Մոլ -120 կՎտ (GB/T DC,CCS2) 6. Առինջ Մոլ - 120 կՎտ (GB/T DC) 7. Էտալոն սուպորմարկետ (Բաշինջաղյան փ. 175 / 7) -120 կՎտ(GB/T DC) 8. <<Ռիբոկ>> սպորտային ակումբ – 80 կՎտ (GB/T DC,CCS2) 9. <<Շոփինգ Սիթի>> առևտրի կենտրոն - 80 կՎտ (GB/T DC,CCS2) 10. Ֆուչիկի փ. 27/20- 80 կՎտ (GB/T DC,CCS2) 11. << Երևան Պլազա>> բիզնես – կենտրոն - 60 կՎտ(GB/T DC) hanel enq texy nori mej 12. <<ԱՓ ԸՆԴ ԱՓ>> բիզնես – կենտրոն - 60 կՎտ (GB/T DC) 13. <<ԱՅ ԹԻ ՊԱՐԿ>> բիզնես – կենտրոն - 60 կՎտ(GB/T DC) 14. <<Վիասֆեր տեխնոպարկ>>- 60 կՎտ (GB/T DC) 15. Բյուրեղ թաղամաս - 60 կՎտ (GB/T DC) 16. <<Աստղիկ >> ԲԿ- 60 կՎտ (GB/T DC) 17. Մերգելյան ԳՀԻ - 60 կՎտ(GB/T DC) hanel enq texy nori mej 18. Մուլտի Մեջիք Մոլ - 60 կՎտ (GB/T DC) 19. Մոլդովական փ.27/8 - 60 կՎտ (GB/T DC) 20. Մոլդովական փ.27/8 - 60 կՎտ (GB/T DC,CCS1) 21. Արցախի փ.47/2- 60 կՎտ (GB/T DC)					
		22. Բագրևանդ 3/19- 200 կՎտ (GB/T DC, GB/T DC) 23. Բագրևանդ 3/19- 200 կՎտ (GB/T DC, CCS1) 24. Մոլդովական փ. 27/8 - 80 կՎտ (GB/T DC, CCS1) 25. Քոչինյան փ. 13 - 160 կՎտ (GB/T DC, CCS2) 26. Քոչինյան փ. 13 - 160 կՎտ (GB/T DC, CCS2) 27. Միասնիկյան 40/2- 60 կՎտ (GB/T DC, Type 1) 28. Երազ Բիզնես կենտրոն- 80 կՎտ (GB/T DC, CCS1) 29. Երազ Բիզնես Կենտրոն-80 կՎտ (GB/T DC,CCS1) 30. Երազ Բիզնես Կենտրոն-80 կՎտ (GB/T DC,CCS2) 31. Ադոնց 19/8 – 80 կՎտ (GB/T DC,CCS1) 32. Ադոնց 19/8 – 120 կՎտ (GB/T DC,CCS2) 33. Երևան Սիթի կոմիտաս – 80 կՎտ (GB/T DC,CCS2) 34. Մերգելյան ԳՀԻ, Հ. Հակոբյան - 120 կՎտ (GB/T DC, CCS2) 35. ԱՓ ԸՆԴ ԱՓ բիզնես կենտրոն - 60 կՎտ (GB/T DC, Type 1)					

		36. ԱՓ ԸՆԴ ԱՓ բիզնես կենտրոն - 80 կՎտ (GB/T DC, CCS2) 37. Ռիբոկ սպորտային ակումբ – 80 կՎտ (GB/T DC,CCS1) 38. Կայզեր, Մարգարյան 23/9– 200 կՎտ (GB/T DC,CCS2) 39. Կայզեր, Մարգարյան 23/9– 200 կՎտ (GB/T DC,CCS2) 40. Orange Fitness, Ծիծեռնակաբերդի 7/1- 80 կՎտ (GB/T DC, CCS2) 41. Orange Fitness, Ծիծեռնակաբերդի 7/1- 80 կՎտ (GB/T DC, CCS1) 42. Երևան Պլազա բիզնես կենտրոն - 80 կՎտ (GB/T DC, CCS2) 43. Երևան Մոլ – 200 կՎտ (GB/T DC,CCS2) 44. Երևան Մոլ – 200 կՎտ (GB/T DC,CCS1) 45. Շոփինգ Սիթի առևտրի կենտրոն - 60 կՎտ (GB/T DC, Type 1) 46. Մուլտի Վելնես – 60 կՎտ (GB/T DC, GB/T) 47. Մուլտի Վելնես – 60 կՎտ (GB/T DC, Type 1) 48. Մուլտի Վելնես – 160 կՎտ (GB/T DC, CCS2) 49. Էրեբունի Մոլ -80 կՎտ (GB/T DC,CCS2) 50. Այգի Բիզնես Կենտրոն, Թաիրով 24 - 80 կՎտ (GB/T DC,CCS1) 51. Հայ-բելառուսական առևտրի տուն - 120 կՎտ (GB/T DC,CCS1) 52. Անդրանիկի 66/5-120 կՎտ (GB/T DC, CCS2) 53. Անդրանիկի 66/5-200 կՎտ (GB/T DC, CCS1) 54. Արցախի փ.47/2- 60 կՎտ (GB/T DC) 55. Բագրևանդ 3/19-200 կՎտ (GB/T DC,CCS1) 56. Բագրևանդ 3/19-200 կՎտ (GB/T DC) 57. Թևոսյան 7/4-160 կՎտ (GB/T DC) 58. Քոչինյան 13-160 կՎտ (GB/T DC,CCS2) 59. Քոչինյան 13/11-160 կՎտ (GB/T DC) 60. Միասնիկյան 40/2-60 կՎտ (GB/T DC) 61. Առինջ, Մ. Բաբաջանյան 1- 60 կՎտ (GB/T DC, Type 1) 62. Քանաքեռ Զ.Քանաքեռցու փ--120 կՎտ (GB/T DC,CCS1) 63. Քանաքեռ Զ.Քանաքեռցու փ--120 կՎտ (GB/T DC) 64. Շիրակի 28-160 կՎտ (GB/T DC, GB/T DC) 65. Գայի պ.1/8- 160 կՎտ (CCS2,GB/T DC) 66. Գայի պ.1/8- 160 կՎտ (GB/T DC,GB/T DC) 67. Էրեբունի, Ազատամարտիկների 1/11-200 կՎտ (CCS1,GB/T DC) 68. Էրեբունի, Ազատամարտիկների 1/11-160 կՎտ (CCS1,GB/T DC) 69. Էրեբունի, Ազատամարտիկների 1/11-200 կՎտ (CCS2,GB/T DC) 70. Էրեբունի, Ազատամարտիկների 1/11-160 կՎտ (CCS2,GB/T DC)					

		71. Հ.Հակոբյան, 3 - 160 կՎտ (CCS2,GB/T DC) 72. Հ.Հակոբյան, 3 - 160 կՎտ (CCS2,GB/T DC) 73. Հ.Հակոբյան, 3 - 160 կՎտ (GB/T DC,GB/T DC) Տեղադրված կայաններ մարզերում՝ 74. Օրիգինալ Մոթորս, Աբովյան, Երևանյան 1/100 – 80 կՎտ (GB/T DC,CCS1) 75. Օրիգինալ Սուպերմարկետ, Աբովյան, Սևանի 2- 80 կՎտ (GB/T DC, CCS2) 76. Ռոկոլա սուպերմարկետ, Աբովյան, Ե. Պետրոսյան 1/16 – 160 կՎտ (GB/T DC,CCS1) 77. ԳԿ պետրոլ, Նոր Հաճն, գետամեջ 2փ. 17- 120 կՎտ (GB/T DC, CCS1) 78. Զովունի Food court – 80 կՎտ (GB/T DC,CCS1) 79. Հոմպլեքս, Պռոշյան գ., Գ. Չաուշի 1/47- 80 կՎտ (GB/T DC, CCS2) 80. Հոմպլեքս, Պռոշյան գ., Գ. Չաուշի 1/47- 60 կՎտ (GB/T DC, Type 1) 81. Նոր Գեղ, Ֆ. Թևոսյան- 60 կՎտ (GB/T DC, Type 1) 82. M1 մայրուղի- 80 կՎտ (GB/T DC, CCS2) 83. Ոզնիների այգի, M1 Ուջան -60 կՎտ (GB/T DC, Type 1) 84. F1 food, Երևան, Երասխ 11- 60 կՎտ (GB/T DC, Type 1) 85. Անտառ ռեստորան, Ծազկաձոր, Օլիմպիական 18- 80 կՎտ (GB/T DC, CCS2) 86. Eighty eight, Ծազկաձոր, Տանձաղբյուր փ., 34/1 - 80 կՎտ (GB/T DC, CCS2) 87. Ճոպանուղի, Ծաղկաձոր- 120 կՎտ (GB/T DC, CCS2) 88. Ճոպանուղի, Ծաղկաձոր- 200 կՎտ (GB/T DC, CCS1) 89. Սենատոր, Ծաղկաձոր, Փահլավունյաց 92 – 80 կՎտ (GB/T DC, CCS1) 90. Գնթունիկ, Ապարան, Մ. Բաղրամյան 39– 80 կՎտ (GB/T DC, CCS1) 91. Ծովագյուղ, Սևան 2 մայրուղի- 120 կՎտ (GB/T DC, CCS1) 92. Ծովագյուղ, Սևան 2 մայրուղի- 120 կՎտ (GB/T DC, CCS2) 93. Ծովագյուղ, Սևան 2 մայրուղի- 80 կՎտ (GB/T DC, CCS1) 94. 777 station, Գյումրի, Երևանյան Մայրուղի - 120 կՎտ (GB/T DC, CCS1) 95. Finca, Գյումրի, Խրիմյան հայրիկ 46ա- 120 կՎտ (GB/T DC, CCS2) 96. Finca, Գյումրի, Խրիմյան հայրիկ 46ա- 200 կՎտ (GB/T DC, CCS1) 97. Աշոցք- 120 կՎտ (GB/T DC, CCS1) 98. Իջևան, Երևանյան 111/2– 60 կՎտ (GB/T DC, Type 1) 99. Օսկար հյուրանոց, Նոյեմբերյան, Հաղթանակ 1/44– 60 կՎտ (GB/T DC, Type 1)					

		100.Բագրատաշեն մաքսատուն M6- 120 կՎտ (GB/T DC, CCS1) 101.Բագրատաշեն մաքսատուն M6- 120 կՎտ (GB/T DC, CCS2) 102.Գ. Մրգավան Խ.Աբովյան 31/1-160 կՎտ (CCS1,GB/T D					
		Կորպորատիվ փաթեթի օգտագործման նկարագիրը EVAN բջջային հավելվածում Գործընկերոջ կողմից տրամադրված համապատասխան աշխատակցի (դիսպեչեր) հեռախոսում ներբեռնվում է EVAN բջջային հավելվածը և ստեղծվում հատուկ օգտահաշիվ, որտեղ «ԷՎԱՆ» ՍՊ ընկերությունը, համաձայն Գործընկերոջ պահանջի, լիցքավորում է լիցքավորման ծառայության մատուցման գումար։ Նշված աշխատակիցն արդեն նշված օգտահաշվից կարող է անձամբ լիցքավորել Գործընկերոջ վարորդների մեքենաները EVAN լիցքավորման կայաններից։ Աշխատակիցը նաև կարող է հատուկ օգտահաշվում իր ընտրությամբ ավելացնել, ապա նաև հեռացնել համապատասխան վարորդների։ Աշխատակիցը հատուկ օգտահաշվում առկա գումարից կարող է վարորդներին տալ օրական, շաբաթական կամ ամսական սահմանաչափ՝ լիցքակայաններից ինքնուրույն լիցքավորման համար։ Ամեն ամսվա փաստացի օգտված ծառայության դիմաց Գործընկերը «ԷՎԱՆ» ՍՊ ընկերությանը կատարում է վճարում՝ վերջինիս կողմից ներկայացրած հարկային հաշվի համաձայն։					
		EVAN հավելվածով լիցքավորելու գործընթացի նկարագիր 1. Բացել EVAN հավելվածը: 2.Մուտք գործել EVAN հաշիվ (account) 3.Գտնել և ընտրել ակնկալվող լիցքավորման կայանը քարտեզից կամ կայանների ցանկից կամ սկանավորել QR կոդը։ 4.Միակցել CCS2 / GB/T միակցիչը էլեկտրական մեքենային: 5.Հավելվածում ընտրել CCS2 / GB/T միակցիչը կամ սկանավորել համապատասխան QR կոդը: 6. Սեղմել «Սկսել» կոճակը:					

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-67-89
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ստորագրող
ՏԻԳՐԱՆ ԵՆՈՔՅԱՆ
3408840229

2026-05-22 15:16:48 GMT+04:00
Հավաստված է EHDM-ի կողմից

_ Տ. Ենոքյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ԷՎԱՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի փ. 17-24
Բանկ՝ «ԱմերիաԲանկ» ՓԲԸ

Հ/հ՝ 1570073926220100
ՀՎՀՀ՝ 02843803
հեռ. 044 804 802
Էլ. Փոստ: info@e-evan.com

_____ Հ. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ)

Հավելված N 2
«____» _____ 2026 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱՇՁԲ-2026/ԱԽ-39-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	**63711270/13**	էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայություններ					10 000 000	10 000 000	20 000 000	20 000 000	20 000 000	40 000 000	40 000 000	40 000 000	**40 000 000**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-67-89
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Տ. Ենոքյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ԷՎԱՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի փ. 17-24
Բանկ՝ «ԱմերիաԲանկ» ՓԲԸ

Հ/հ՝ 1570073926220100
ՀՎՀՀ՝ 02843803
հեռ. 044 804 802
Էլ. Փոստ: info@e-evan.com

_____ Հ. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ)

Հավելված 3
« » 2026 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-39-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2026 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-39-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« » » 2026 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-39-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.